ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ. (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1150: **գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 12 ՄԱՐՏԻ 2019Թ.
№ 6 (496)
www.syuniacyerkir.am

Երբեք այսքան մեծ չի եղել անկեղծության կարիքն ու կարոտը, ինչպես այսօր...

Հովհաննես Թումանյան

Նա այդ էր, նա սպարապետ էր...

Հրանտ Մաթեւոսյան

Վազգեն Սարգսյանի հետ իմ առաջին շփումները վերաբերում են իր 30-ամյա եւ իմ 55-ամյա հասակներին: Երեսուն տարին տղամարդու ամենագեղեցիկ հասակն է, բայց եւ հիսունհինգը չի տգեղ, քանի որ չի մոռացել իր երեսնամյա հասակը, այլեւ անցած ճանապարհի կշռելի վաստակ ունի՝ որ ով գիտի, մարմնավոր ու մտավոր կառույցն ինչքան էլ հաջող եւ ընթացքը ինչքան էլ սլացիկ, ով գիտի ունենալո՞ւ է իր երիտասարդ ընկերը, ամե՞ն ոք է ունենում:

Շարժման ու բախման առաջամարտիկներից մեկի մասին խոսելիս, ուր պիտի որ մատնվելիս լիներ իմ կասկածոտ ու վերապահ վերաբերմունքը այդ մարդուն եւ այդ մարդու այդ տիպին, որ միայն իր խաղն է կարեւորում եւ չի մտածում ծանր ու կործանիչ հետեւանքների մասին, Վազգենը հանկարծ, իր նման միանգամից, մի տեսակ՝ ինձ թույլ չտալով նեղսիրտ ու նեղմիտ լինել եւ թույլ չտալով արատ տեսնել մարդու մեջ, իր նման արագ գլորեց.

- Գիտես ի՞նչ տղա էր... խաբել՝ վրացուն խոսող ոչխար էր ծախել՝ կրկեսի իբր թե կորած ոչխարը: Գիտես ի՞նչ տղերք կան... Ձեռներիս վրա մեռավ, ական էր փորձարկում:

Ինձ մնում էր հիմա ծիծաղել «խոսող ոչխարի» վրա, հետ քաշվել այդ խոսակցությունից, լռել եւ հետո հասկանալ, որ ես եւ Վազգենը տարբեր մարդիկ ենք, որ մարդկային զանգվածի գլխին ինքը կանգնած է գրկաբաց ու թեւերը պարզած եւ այդ զանգվածի մեջ յուրաքանչյուր անհատի ու անհատականության ինքը տեսնում եւ ընկալում է այնպես, ինչպես նրանք կան՝ մարդկային բոլոր արատներով ու առաքինություններով, իսկ ես՝ ընդհակառակը՝ խորշում, վախենում,

էջ 3

Թունելագործների բնականոն գործունեության ապահովումը՝ օրախնդիր

Մարտի 4-ի առավոտյան «Թունել» փակ բաժնետիրական ընկերության 20-25 աշխատակից Սյունիքի մարզպետարան էր այցելել բարձրաձայնելու իր չվճարված արձակուրդների եւ աշխատավարձերի մասին. ընկերության մարդիկ երեք ամիս է՝ աշխատավարձ չեն ստանում:

Ընկերությունում նման իրավիճակ է ստեղծվել կատարված աշխատանքների դիմաց պատվիրատու կազմակերպությունների կողմից վճարումները ժամանակին չկատարելու հետեւանքով:

Բողոքավորների երեք հոգանոց խմբին ընդունել է Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը, ծանոթացել նրանց պահանջներին, տեղեկացրել, որ զուտ իրավական առումով ինքը սահմանափակ պատասխանատվությամբ կամ բաց բաժնետիրական ընկերությունների գործերին չի կարող միջամտել:

Մարզպետը, այդուհանդերձ, հորդորել է ընկերության սեփականատիրոջը՝ հերթական անգամ ներդնելու իր միջոցները՝ կայունացնելու ընկերության գործունեությունը:

Ինչպես «Սյունյաց երկրին» փոխանցեց «Թունել» ՓԲ ընկերության գործադիր տնօրեն Գոռ Բարսեղյանը, ընկերությունում աշխատող 70 հոգուց մի մասը հարկադիր պարապուրդի մեջ է, միայն 12 հոգանոց մի խումբ է աշխատում Ագարակում՝ կատարելով տեղի պղնձամոլիբդենային կոմբինատի շինարարական պատվերը:

Նա նաեւ փոխանցեց, որ Սյունիքի մարզպետարանն ու ընկերության պատասխանատուներն ուղիներ են փնտրում՝ թունելագործներին աշխատանքային ճակատով ապահովելու համար, ինչը նրանց կերաշխավորի կայուն աշխատավարձ, նաեւ հնարավորություն կտա ապահովել մասնագիտական բացառիկ ներուժ ունեցող այդ ընկերության բնականոն գործունեությունն ու զարգացումը:

Վահրամ Օրբելյան

Հաստատվեց Կապան համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը

Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ համայնքի ավագանու արտահերթ նիստ, որի օրակարգը ներառում էր չորս հարց: Համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությամբ հանդես եկավ համայնքապետարանի ֆինանսական բաժնի պետ Իվետա Թադեւոսյանը: Ըստ բանախոսի՝ Կապան համայնքի բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 1 միլիարդ 836 միլիոն դրամ, տարեկան ճշտված պլանի 1 միլիարդ 866 միլիոնի դիմաց կամ բյուջեն կատարվել է 98.4 տոկոսով, ինչը 19.1 տոկոսով գերազանցում է 2017 թ. բյուջեի եկամուտների հավաքման մակարդակը: Այնուհետեւ զեկուցողն անդրադարձավ տարբեր ցուցանիշների գծով (հարկեր եւ տուրքեր) բյուջեի կատարման մակարդակին:

Համայնքի ավագանու նիստը քննության առավ Կապան համայնքի 2019-2023 թթ. զարգացման ծրագիրը, որ ներկայացրեց համայնքապետարանի տնտեսական զարգացման եւ արտաքին կապերի բաժնի պետ Հասմիկ Ղոնյանը, ով հընթացս անդրադառնալով Կապան համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանին: Մասնավորապես այս տարում զբոսաշրջության զարգացման համար նախատեսվում է չորս միլիոն 860 հազար դրամ: Հարց հնչեց, թե ինչի համար պիտի ծախսվի այդ գումարը: Զեկուցողը մանրամասնեց. պատմամշակութային հուշարձանների եւ կոթողների, քանդակների պահպանության եւ գեղարվեստական լուսավորում՝ մեկ միլիոն դրամ, ինչպես նաեւ համայնքապետարանը կհամաֆինանսավորի «ԵՄ-ն զբոսաշրջության զարգացման համար արկածային տուրիզմի զարգացում պատմական Սյունիքում» ծրագիրը՝ 3 միլիոն 860 հազար դրամ:

Համայնքի առաջնահերթ խնդիրներից է համարվում աղբահանությունը, վերելակների եւ տանիքների նորոգումը, քանի որ բնակիչների նամակները, դիմում-բողոքներն այդ ոլորտներին են առնչվում:

Առաջին պլանին են նաեւ զբոսաշրջության զարգացումը եւ դրան համապատասխան ենթակառուցվածքների ստեղծումը:

Իսկ համայնքի զարգացման խոչընդոտներն են գործարար միջավայրի եւ ձեռնարկատիրության բացակայությունը, գործազրկությունը եւ բյուջեի սուղ հնարավորությունները:

Վահրամ Օրբելյան

Քրիստափոր Պետրոսյան. Գորիս աշխարհի նվիրյալ զավակը

Քրիստափոր Պետրոսյանն այն եզակի անձանցից է, ում երկու անգամ է վստահվել ղեկավարելու Գորիսի շրջանը, երկրորդ անգամ՝ ավելի տեւական ժամանակով (1964-1974թթ.): Եղել է շրջսովետի գործկոմի նախագահ: Բացի դրանից՝ Գորիսի կուսշրջկոմի առաջին քարտուղար աշխատելու ժամանակ (1965թ.) պաշտպանել է թեզ, ստացել տնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 1970 թվականին՝ դոցենտի կոչում: 1974-78թթ. եղել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղի տնօրեն, 1978-1987թթ. աշխատել է նույն մասնաճյուղում՝ դասավանդելով «Քաղաքատնտեսություն» եւ «Գիտական կոմունիզմ» առարկաները: Եղել է երեք գումարման հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավոր: Գյուղատնտեսության մեջ ձեռք բերած նշանակալի հաջողությունների համար արժանացել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանի:

Սրանք են Քրիստափոր Պետրոսյանի գործունեության կարեւոր շրջափուլերը: Իսկ ընդհանրապես, նա դժվարին, չարչարանքներով լի ճանապարհ է անցել: Երկու տարեկանում զրկվելով հորից՝ ապրուստի միջոցներ հայթայթելու համար գյուղատնտեսական զանազան աշխատանքներ է կատարել: Այդ մասին տեղեկանում ենք նրա համառոտ ինքնակենսագրությունից, որ վերնագրել է «Նախրապահից՝ նախագահ-քարտուղար»՝ թվագրված՝ 26 հուլիսի 1960 թվական. **«Երկու տարեկանում կորցրի հորս եւ վեց ամսական եղբորս՝ Եղիշեի հետ մնացի այրիացած մորս խնամքի տակ: Շուտով կյանքի պահանջն ինձ ձգեց աշխատանքի մեջ: Դեռ չբոլորած տասը տարիս՝ հայրենի Կորնիձոր գյուղում դարձա հասարակական նախրապահ, ապա գութանի մշակ՝ գյուղի ունեւորների եւ կուլակների մոտ:**

Մայրս, արցունքներն աչքերին, հացահատիկի դաշտերից հասկ էր հավաքում կամ երկու կիլոմետր հեռավորությունից գյուղի ունեւորների համար կուժը մեկ կոպեկով խմելու ջուր կրելով կամ սրա, նրա համար պարզունակ ջուլհականոցում աշխատելով՝ խնամում էր մեզ: Խորհրդային կյանքն ինձ դուրս հանեց կյանքի այդ հատակից եւ տվեց կրթություն եւ դիրք հանրօգուտ աշխատանքով զբաղվելու հնարավորություն»:

Սկզբնական կրթությունը Քրիստափոր Պետրոսյանը ստացել է հայրենի գյուղի տարրական դպրոցում, ապա ավարտել է Տեղ գյուղի յոթնամյա դպրոցը: 1938 թվականին ավարտել է Գորիսի գյուղատնտեսական տեխնիկումը՝ գերազանց առաջադիմությամբ, ինչի համար տեխնիկումի տնօրենությունը նրան երաշխավորել է ուսումը շարունակել Երեւանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում: Ընդունվում է բուհի բանասիրական ֆակուլտետը, սովորում էքստեռն՝ ավարտելով 1952 թվականին, ստանում հայոց լեզվի եւ գրականության ուսուցչի որակավորում: Վերահաս պատերազմը թույլ չի տվել, որ ժամանակին բարձրագույն կրթություն ստանա:

Իր տարեկիցների նման մեկնել է Կարմիր բանակ, երբ սկսվել է Մեծ հայրենականը: Արխիվային փաստաթղթերից իմանում ենք, որ 1941-1942-ին կուրսանտ է եղել Թելավիի հետեւակային ուսումնարանում, այնուհետեւ մարտնչել է Ուկրաինական ռազմաճակատում. հրաձգային գնդում դասակի հրամանատար է եղել: Երկու անգամ վիրավորվել է եւ երկրորդ կարգի հաշմանդամ դարձած՝ ավարտել իր բաժին պատերազմը: Ռազմաճակատ մեկնեց նաեւ եղբայրը՝ Եղիշեն, նրան այլ ճակատագիր բաժին հասավ. համարվում է անհայտ կորած: Մայրը՝ Վարդի աքերը, մինչեւ իր մահը, աչքը ճամփին, սպասում էր որդու վերադարձին:

Մեծ հայրենականից վերադառնալուց հետո Քրիստափոր Պետրոսյանը զբաղվել է լրագրությամբ: 1945-1949թթ. եղել է «Սովետական Հայաստան» թերթի թղթակիցը Գորիսի եւ Սիսիանի շրջաններում, իսկ 1949-52 թվականներին խմբագրել է Գորիսի շրջանային թերթը: 1952 թվականին գործուղվել է Մոսկվա՝ ԽՄԿԿ Կենտկոմին կից բարձրագույն կուսակցական դպրոցում սովորելու, որը նախանշել է նրա հետագա գործունեությունը կուսակցական-պետական շինարարության բնագավառում՝ ՀԿԿ կենտկոմի պրոպագանդայի ու ագիտացիայի բաժնի հրահանգիչ, ապա Գորիսի կուսշրջկոմի ագիտացիայի եւ պրոպագանդայի բաժնի վարիչ:

1957 թվականին Քրիստափոր Պետրոսյանն ընտրվում է Գորիսի շրջխորհրդի գործկոմի նախագահ՝ պաշտոնավարելով մինչեւ 1961 թվականը, երբ առաջին անգամ ընտրվում է ՀԿԿ Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար:

Մեծ հայրենականի ավարտից հետո Քրիստափոր Պետրոսյանն ընտանիք կազմեց՝ ամուսնանալով քարաշենցի մանկավարժ Արուս Դանիելյանի հետ: Ծնվեցին դուստրերը՝ Ալիսան, Լարիսան՝ մասնագիտությամբ բժշկուհիներ, որդին՝ Արան, ով ճարտարագետի մասնագիտությունն ընտրեց: Վերջինից էլ հետաքրքրվեցի, թե ո՞րն է համարում հոր գործունեության ամենակարեւոր շրջանը: Հոր կատարած գործերից նախեւառաջ առանձնացնում է խոր ձորերից ու քարանձավներից շրջանի գյուղերի տեղափոխումը դեպի հարթություն, ինչը փոքրիշատե քաղաքակիրթ կենցաղ ապահովեց գյուղաբնակի համար: Քանզի դարեր ի վեր նրա համար բնակարան էին ծառայում քարանձավն ու որմնախորշը: Խոր ձորերից հարթություն բարձրացան Շինուհայրը, Խնձորեսկը, Քարաշենը, Կորնիձորը, այլ գյուղեր, դրանցում կառուցվեցին դպրոցներ, սոցիալ-մշակութային օջախներ: Իր հեղինակած բրոշյուրներից մեկը «Քարանձավից դեպի լույս» վերնագիրն է կրում: Հետաքրքրական մի փաստ իմացանք. երբ կառուցվում էր Խնձորեսկը, նրա հորդորով գրող Սուրեն Այվազյանը մեկնում է Միջին Ասիա՝ այդտեղ բնակվող խնձորեսկցիներին համոզելու, որ վերադառնան եւ բնակվեն նորակառույց գյուղում:

Հաջորդ կարեւոր գործը, ըստ Ա.Պետրոսյանի, որ նախաձեռնեց եւ ավարտին հասցրեց Քրիստափոր Պետրոսյանը, Գորիսում Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղի ստեղծումն էր: Հաճախ էր հարազատների հետ զրույցներում կրկնում, թե ուզում է Գորիսում կրթական կենտրոն ստեղծել: Ասում էր՝ Կապանում զարգացած է արդյունաբերությունը, Սիսիանում՝ գյուղատնտեսությունը, իսկ Գորիսի բնությունը նպաստավոր է գիտական աշխատանքով զբաղվելու համար: Եվ միշտ վկայակոչում էր այն փաստը, որ Ռուսաստանի որոշ քաղաքներ գիտական կենտրոնների են վերածվել:

Կիրովականից հետո Գորիսը հաջորդ քաղաքն էր, որտեղ մայրաքաղաքային բուհի մասնաճյուղ բացվեց: Նպատակին հասնելու համար «գործի դրվեցին» անձնական կապերը: Այն ժամանակ Երեւանի մանկավարժական ինստիտուտի ռեկտորը Կամո Ուդումյանն էր, ով ավելի վաղ Շամշադինի կուսշրջկոմի առաջին քարտուղարն էր, նույն ժամանակահատվածում Պետրոսյանը ղեկավարում էր Գորիսի կուսշրջկոմը, այսինքն՝ գործընկերներ էին եւ իրար մոտիկից գիտեին: Հաճախակի հեռաձայնում էր Հայաստանի գիտությունների ակադեմիայի այն ժամանակվա պատասխանատու աշխատակիցներից Ալեքսանդր Մարջանյանին, ով նույնպես նախանձախնդիր էր Գորիսում մասնաճյուղ ստեղծելու հարցում: Չուշացավ նաեւ կառավարության որոշումը, ըստ որի 1967 թվականի հոկտեմբերի 1-ին Գորիսում հիմնադրվեց Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղ՝ մաթեմատիկայի եւ ֆիզիկայի ֆակուլտետներով: Քրիստափոր Պետրոսյանի ջանքերով Գորիսում ստեղծվեց Մերգելյանի անվան ինստիտուտի մասնաճյուղը, որ բուհավարտներն աշխատանքի տեղ ունենան:

Թե արխիվային փաստաթղթերով, թե ժամանակակիցների հուշերով փորձեցինք ամբողջացնել Քրիստափոր Բաբայիչի կերպարը: **«Անսահման բարի, քաղաքավարի, ցավին արձագանքող, զգայուն, բայց պահանջկոտ անձնավորություն էր: Կյանքում ոչ մեկին վատություն արած չկար: Ճիշտ է՝ ղեկավարը չի կարող բոլորի համար ընդունելի եւ լավը լինել, բայց Քրիստափոր Բաբայիչը հեղինակություն էր վայելում թե հանրապետության ղեկավարության, թե համաքաղաքացիների շրջանում»,** - ներկայացնում են նրա ժամանակակիցները: **«Որպես մարդ ու ղեկավար, ուներ բարձր էրուդիցիա, որով գրավում էր ինչպես իր հետ աշխատողներին, այնպես էլ Գորիսի շրջանի աշխատավորությանը, -** գրում է կորնիձորցի Սիմոն Սիմոնյանը, **- նրա սուփրան բաց էր ինչպես շարքային աշխատողի, այնպես էլ բարձրաստիճան ղեկավարների, գիտության գործիչների, արվեստի եւ մշակույթի մարդկանց առջեւ: Պատանեկան, ուսանողական տարիներից մոտ եմ եղել նրան ու ընտանիքին, զգացել նրա ազնվությունն ու անկեղծ մարդասիրությունը: Ամենաբարդ հարցի լուծման տարբերակը գտնում էր, ուներ բարձր ինտելեկտ եւ սառը դատողություն»:**

Իսկ որդու պատմածներից իմանում ենք, որ Ք.Պետրոսյանը կենցաղում զուսպ, սակավապետ մարդ էր. **«Ընտանիքում չի սիրել խոսել իր կուսակցական աշխատանքի մասին, մեր ընտանեկան հարկի տակ հանդիպումներ շատ են եղել, մենք ոչ մի բանի չենք խառնվել: Կյանքում չի խմել ու չի ծխել, սիրում էր լինել բնության գրկում, հաճախակի էր լինում դաշտ ու անտառում, ինձ էլ էր հետը տանում: Չէր սիրում որեւէ սննդի օբյեկտում հաց ուտել, այլ նախընտրում էր որեւէ աղբյուրի մոտ ճաշակել այն ամենը, ինչ մայրն էր իր ձեռքով պատրաստել: Գորիսից մինչեւ Երեւան բոլոր աղբյուրների տեղը գիտեր, բոլոր հանդամասերը հոգեհարազատ էին նրան. սիրում էր սունկ հավաքել, խնջլոզ քաղել, երբեմն առաջին ծաղկած ձնծաղիկներով էր տուն մտնում: Սիրում էր որս անել, կարծեմ, Հայաստանի պատվավոր որսորդ էր, անվրեպ կրակող էր, երեւի դեր էր խաղում այն հանգամանքը, որ պատերազմում մոտոհրաձգային գնդում էր ծառայել, հիմնականում վայրի թռչուն էր խփում, մեկ-մեկ էլ՝ նապաստակ,** - վերհիշում է Արա Պետրոսյանը, **-ամենակարեւորը՝ հայրս սովորեցնում էր սեփական քրտինքով ապրել: Երբեմն թերթ կարդալիս տողերի տակ կարմիր մատիտով ընդգծում էր եւ անպատճառ տալիս, որ ես էլ կարդամ: Դրանք հիմնականում վերաբերում էին կաշառակերությանը, անաշխատ եկամուտ ստանալուն, թռցնողներին եւ այլն: Անհաշտ էր հասարակության մեջ տեղ գտած հոռի բարքերի հանդեպ»:**

«Եթե հանգստյան օրը որեւէ տեղ գնալու անհրաժեշտության չկար, նրա հիմնական զբաղմունքը գիրն ու գրականությունն էին, ընթերցանությունը, հողի հետ առանձնապես կապված չի եղել, - վերհիշում է որդին, - նրա նախասիրությունը գրելն ու կարդալն է եղել»: Հավանաբար այդ ամենում դեր է խաղացել այն, որ տեւական ժամանակ զբաղվել է լրագրությամբ, թերթ խմբագրել: Ահավասիկ, մի նախադասություն, որ 1949 թվականին գրել է «Սովետական Հայաստան» թերթի պատասխանատու խմբագիր Հովհաննես Բաղդասարյանը. **«Քրիստափոր Պետրոսյանը խորանում է իր մասնագիտության մեջ եւ համարվում է մեր օրինակելի թղթակիցներից մեկը»:**

Տասներեք գրքի, մի քանի տասնյակ գիտական հոդվածի հեղինակ էր: Հետաքրքրության ոլորտը Զանգեզուր աշխարհն էր եւ հայրենի Գորիսի շրջանը: Հարկ է միայն թվարկել նրա հեղինակած գրքերի վերնագրերը. **«Երկու գյուղ, երկու կյանք», «Կոլտնտեսության էկոնոմիկան», «Լեռնաշխարհի վերածնունդը», «Զանգեզուր. պատմատնտեսական ակնարկ»** եւ այլն: Որոշ գրքույկներ՝ **«Մասսաների հետ, մասսաների համար», «Սոցիալիստական տնտեսավարման մի քանի հարցերի մասին», ժամանակի գաղափարախոսության կնիքն էին կրում, բայց այլ կերպ լինել չէր կարող:** Ոմանք նույնիսկ չարախոսում էին, թե ինչպես կարող է կուսակցական առանցքային պաշտոն կրողը ժամանակ գտնել զբաղվելու գիտությամբ (թեզ պաշտպանել), գրքեր եւ հոդվածներ հեղինակել:

Մինչեւ կյանքի վերջին տարիները զբաղվել է գիտական աշխատանքով, դասախոսել:

Տնտեսական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Քրիստափոր Պետրոսյանը երկրային կյանքին հրաժեշտ է տվել 2007 թվականի հունիսին:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Եթե յուրաքանչյուրը թանգարանից իր հետ մեկ կաթիլ Վազգեն տանի, մեր երկիրն անպաշտպան չի մնա

Հայ ազգը վառ անհատականությունների պակաս երբեք չի ունեցել, բայց միշտ էլ զգացել է պետականամետ այնպիսի գործիչների կարիք, ովքեր, համատեղելով ռազմական, քաղաքական ու ստեղծագործական գործունեությունը, նաեւ բացել են ազգի առջեւ ծառացած հրատապ խնդիրներին հասնելու ճանապարհը: Ազատագրական պայքարի վերելքի ամեն մի շրջան ծնում է իր հերոսներին, իսկ հերոսների շարքից առանձնանում է առաջնորդը... Այս անհատներից է Սպարապետ Վազգեն Սարգսյանը, ով մեծ ավանդ ունեցավ Հայոց պետականության հիմնարկեքի ու բանակաշինության գործում: Ավաղ, մեր ժողովուրդը հաճախ ժամանակին չի ճանաչել իր առաջնորդին, եւ հենց դա էլ եղել է նրա դժբախտությունը: 1999 թ. հոկտեմբերի 27-ի ոճրագործությունից հետո՝ դեկտեմբերին, նա հետմահու արժանացավ Հայաստանի «Ազգային հերոսի» կոչման եւ «Հայրենիք» շքանշանի: 2000 թվականին ՀՀ կառավարությունը որոշում կայացրեց Հայաստանի Ազգային հերոս Վազգեն Սարգսյանի տուն-թանգարան ստեղծելու մասին: Նրա անունն է կրում այսօրվա Ռազմական ակադեմիան: Երեւանում կա համանուն փողոց, իսկ ծննդավայր Արարատի մարզի Արարատ (Դավալու) գյուղում գործում է տուն-թանգարանը: Եվ ահա այս տարի ազգովի նշում ենք նրա ծննդյան 60-ամյակը: Կազմակերպվում են միջոցառումներ ինչպես մայրաքաղաք Երեւանում, այնպես էլ նրա ծննդավայր Արարատում:

Սպարապետի ծննդյան նախօրեին մեր զրուցակիցն է Վազգեն Սարգսյանի տուն-թանգարանի էքսկուրսավար Երանուհի Մուսիկյանը: Տուն-թանգարանը բացվել է 2001 թ. մարտի 5-ին՝ Վազգենի ծննդյան տարեդարձի օրը, Արարատի մարզի Արարատ գյուղում: Թանգարանում ամփոփված է Վազգեն Սարգսյան գրողի, զինվորի, սպարապետի, պետական գործչի կյանքն ու կենսագրությունը ներկայացնող պատմությունը:

Տուն-թանգարանի բակում տեղադրված է Սպարապետի կիսանդրին:

- Պատմեք խնդրեմ թանգարանի մասին:

- Սպարապետի տուն-թանգարանը գտնվում է Արարատ գյուղում՝ իր տանը կից եւ կառուցվել է ընտանիքի ֆինանսավորմամբ: Դրա երկու մեծ սրահում տեղադրված են Սպարապետի անձնական իրերն ու նվերները՝ սկսած Վազգեն-անհատից (մանկավարժ, ֆուտբոլիստ, գրող-արձակագիր) մինչեւ ռազմական գործիչ եւ պետական այր լինելը: Թանգարանի աշխատանքային առօրյան սկսվում է ամեն օր՝ առավոտյան ժամը 10-ից մինչեւ 20-ը: Հանգստյան օրը՝ երկուշաբթի, մուտքը՝ անվճար:

- Իսկ ովքե՞ր են թանգարանի հիմնական այցելուները:

- Թանգարան այցելում են աշխարհի տարբեր ծայրերից, հանրապետության տարբեր մարզերից՝ անկախ տարիքից, պաշտոնից, սոցիալական վիճակից: Հիմնական այցելուները դպրոցականներն են, ուսանողությունը, տարբեր կազմակերպություններ, երկրապահները:

- Ինչպե՞ս կներկայացնեք մեր Սպարապետին:

- Վազգեն Սարգսյանն Աստծո կողմից ուղարկված պարգեւ էր հայ ժողովրդին, ով եկավ եւ դարերի փոշին մաքրելով՝ գոտեպնդեց մեր ժողովրդին՝ կրելով իր ծանր խաչը՝ հավերժացավ:

Վազգեն անհատն իր տեսակով ազնվագույն, մաքուր, երկիր սիրող, մայրապաշտ, երեխայասեր, ժողովրդական, տիպիկ ազգային նվիրյալ, մտավոր բարձր ունակությունների տեր անձնավորություն էր:

- ի՞նչ հետաքրքիր դեպք կպատմեք Սպարապետի կյանքից:

- Հետաքրքիր դեպքերը Սպարապետի կյանքում անչափ շատ են եղել: Դրանցից մեկը սա է. խորհրդային ժամանակներում, երբ դեռ ինքը «Գարուն» ամսագրի հրապարակախոսական բաժնի ղեկավարն էր, իր գրչակից ընկերների հետ գնում է Արցախ: Ճանապարհին, անցնելով Էդիլլու գյուղի ցուցանակի մոտով, կանգնեցնում է ավտոմեքենան, իջնելով վերցնում մի քարի կտոր եւ ցուցանակի վրայից սկսում քերել «լու» վերջածանցը՝ ասելով. «Ես պետք է մաքրեմ բոլոր այս «լու»-ները»: Գրչակից ընկերներից մեկը, ով ներկա էր գտնվել այդ պահին, հետագայում պատմելիս ավելացրեց. «Տղան ասաց ու արեց»: Դա պատմում էր Արցախյան պատերազմի հաղթանակից հետո:

- Ո՞րն է Ձեր խրատը կամ խորհուրդն այսօրվա երիտասարդությանը:

- Թանգարան այցելած բոլոր աշակերտական եւ ուսանողական խմբերին ուղղված հրաժեշտի իմ խորհուրդն այս է՝ եթե յուրաքանչյուրը թանգարանից իր հետ մեկ կաթիլ Վազգեն տանի, մեր երկիրն անպաշտպան չի մնա:

Գարիկ Ավետիսյան

Նա այդ էր, նա սպարապետ էր...

Հրանտ Մաթեւոսյան

էջ 1

ինձանից վանում եմ յուրաքանչյուրի, ով մարդու իմ իդեալից մի քիչ տարբեր է, եւ այդպես է, որովհետեւ Վազգենը իրեն ի զորու է տեսնում նրանց բոլորին գրկել, ընդգրկել, ենթարկել մի կամքի - նրանք Վազգենի համար կառավարելի են: Կարծ՝ Վազգենը իշխանական, հրամանատարական կոփվածքի ու լիցքերի մարդ էր, եւ ես կարող էի նրա գնդի զինվորը լինել միայն, նրա աշխարհի օրինապահ բնակիչը, իմ ճակատագրի ընթերցումը նրան թողնել եւ ամենքի մեջ ու ամենքի հետ վստահ լինել, որ նրա հայացքի ուղղությունը լույսի եւ հույսի շավիղ է դառնում եւ նրա դրած քայլը՝ ճանապարհի սկիզբ, նրա պարզած ձեռքը թշնամուն բարեկամ է անում եւ սեւ ամայությանը նետված նրա հայացքը բարեկամնեռի բազմություններ է հառնեցնում:

Նա այդ էր, նա սպարապետ էր:

Կովկասյան, համակովկասյան սեւ արջի նրա զորեղ անձն ու ընթացքը վաղվա օրով եթե չվերաճեց սպիտակ ձիավոր սուրբ Սարգիսի, նրա պայծառ լուսավոր ցոլացումը վաղվա օրով իր վրա եթե մի սեւ բիծ ունեցավ - մենք՝ նրա ժամանակակիցներս ենք մեղավոր՝ ես եւ դուք. վաղվա սերունդները իրենց անցյալում, որ մեր այսօրն է, եթե չունեցան այդ սպիտակ ձիավոր սուրբ զորավարին - նրանց երթը շաղվելու ու կանգ է առնելու, ինչպես որ ինքը Վազգենն ու մենք էինք շփոթ խուճապի տրվելու, եթե մեր երթի գլխին չունենայինք Վարդանի ու Նժդեհի լուսեղեն պատկերները:

Ցեղիդ պատմության իմացությունը իհարկե առաքինություն է, առավել եւս՝ եթե այդ վերուվարող հորձանուտների մեջ դու քեզ ես տեսնում ու քոնն ես համարում եւ խրոխտին ու համառին, եւ ընկրկողին ու չքվողին, եւ լուսամիտ եզակիներին՝ յուրաքանչյուրին, բայց մեծ առաքինությունը այսօրը պատմություն տեսնելն է, այսօրվա հերոսին պատմական զրույցներից հյուսված հերոսների չափ մեծ ու անարատ ու լուսավոր ու սիրելի տեսնելը:

Եվ ուրեմն այսօրվա մեր խոսքը՝ իմ եւ բոլորիս խոսքը օրհնանքի ու փառաբանության խոսք է լինելու... փա՛ռք Վազգենին, փառք նրան ծնող ու սնող եւ իր ծնած-սնածին հավատացող ու լուսեղենացնող այս հավատավոր ժողովրդին:

5 մարտի 2001թ.

Հրաժարական է փվել մեր լավագույն համայնքապետերից մեկը՝ Գորայքի համայնքապետ Առուստամ Առուստամյանը

Գորայք, Ծղուկ, Սառնակունք եւ Սպանդարյան գյուղերը միավորող Գորայք համայնքում հունվար ամսից անհանգիստ վիճակ է:

Ավագանու վեց անդամից երկուսը համաձայն չեն համայնքի ղեկավար Առուստամ Առուստամյանի գործունեության կերպին եւ նրան բազում մեղքեր են վերագրում:

«Սյունյաց երկիրը» իրավիճակին ծանոթանալու նպատակով, հարցախույզի միջոցով, փորձեց ճշտել՝ արդյո՞ք համայնքի բնակիչները համամիտ են ավագանու փոքրամասնության դիրքորոշմանը եւ Առուստամ Առուստամյանի գործունեությանը տրվող գնահատականին:

Ինչպես եւ սպասվում էր, հարցվածների մեծագույն մասը բարձր գնահատեց Առուստամ Առուստամյանի գործունեությունը խոշորացված համայնքի ղեկավարի պաշտոնում՝ նշելով բազմաթիվ ծրագրեր, որոնք կյանքի են կոչվել նրա նախաձեռնությամբ (յուրաքանչյուր գյուղում՝ տարեկան 40 մլն դրամի չափով):

Առուստամ Առուստամյանն ավելի վաղ ղեկավարել է Գորայքի գյուղական խորհուրդը (1991-ից), այնուհետեւ՝ 2005-ից՝ Գորայքի տեղական ինքնակառավարման մարմինը:

Հանրապետության բացառիկ գյուղական համայնքներից է Գորայքը, որ համայնքի տարեկան սեփական եկամուտները հասցվել են 140 մլն դրամի:

Ընթացիկ տարում համայնքի վարչական բյուջեն 180 մլն դրամ է, ֆոնդային բյուջեն՝ 140 մլն:

Համայնքի հարցված բնակիչների մեծագույն մասը վերջին օրերին տեղի ունեցած իրադարձությունների հիմքում ինչ-որ մարդկանց անձնական խնդիրներ է տեսնում, ինչ-որ մարդկանց չբավարարված ամբիցիաներ: Ասել է թե՝ Գորայքում վերջին ամիսներին տեղի ունեցած իրադարձությունները համայնքային խնդիրների հետ որեւէ աղերս չունեն:

Տեղի ունեցած ընդվզումը, որոշ բնակիչների դիտարկմամբ, ուղղորդվում էր դրսից:

Ինչեւէ, մոտ երկու ամիս հարատեւող հանրային լարվածությունն օրեր առաջ համայնքում հասավ գագաթնակետին:

Նախ՝ ինչ-որ մարդիկ ստորագրահավաք կազմակերպեցին՝ ընդդեմ համայնքապետի, թեեւ փաստաթուղթ կոչվածն այնքան անփույթ էր լրացվել-գրվել, որ մարզպետարանում անգամ նշանակություն չտվեցին:

Այնուհետեւ՝ երկու-երեք տասնյակ մարդկանց մասնակցությամբ կազմակերպվեց ցույց՝ պահանջելով համայնքապետի հրաժարականը:

Մարտի 1-ի կեսօրին էլ մոտ մեկ ժամ տեւողությամբ նույն մարդիկ փակեցին Գորիս-Երեւան ավտոմայրուղին՝ դարձյալ պահանջելով համայնքապետի հրաժարականը:

Նույն օրը տեղի ունեցավ խոշորացված համայնքի ավագանու նիստ՝ ավագանու վեց անդամից չորսի մասնակցությամբ:

Նիստի ընթացքում էլ համայնքապետն ու ավագանին փոխհամաձայնության եկան. միաժամանակ հրաժարական են տալիս ե՛ւ համայնքապետը, ե՛ւ ավագանին:

Առուստամ Առուստամյանը մեզ հետ զրույցում մասնավորապես ասաց՝ **«Ես համաձայն չեմ այն մեղադրանքներին, որոնք փորձում են վերագրել ինձ: Նրանց պահանջների եւ դիտարկումների հիմքում բացառապես անձնական հարցեր են»:**

Իսկ ինչո՞ւ հրաժարական տվեցիք, ինչո՞ւ ընկրկեցիք. Առուստամ Առուստամյանն ի պատասխան այդ հարցի ասաց՝ **«Կարող էի եւ հրաժարական չտալ, եւ ոչ ոք չէր կարող ինձ ստիպել, մանավանդ որ ընդդիմադիրներն ավագանու կազմում մեծամասնություն չէին կազմում, մանավանդ որ համայնքի ընտրողների մեծամասնության վստահությամբ ընտրված ղեկավար էի: Բայց տվյալ իրավիճակում ինձ մտահոգում էր ոչ թե իմ անձնական կարգավիճակը կամ ուժերի հարաբերակցությունը, ոչ թե հաղթելու կամ պարտվելու հնարավորություններս, այլեւ համայնքի կացությունը, հանրային համերաշխությունն ու անդորրը: Ինձ համար համայնքի շահը բարձր է ամեն ինչից: Եվ ես առաջնորդվեցի հենց այդ շահով: Ու իմ սրտի վրայից մի ծանր քար ընկավ կարծես, երբ հրաժարականի որոշում ընդունեցի»:**

1991 թվականից Գորայք գյուղը ղեկավարած, ամբողջ մարզում մեծ հարգանք եւ հեղինակություն վայելող Առուստամ Առուստամյանը, այդուհանդերձ, մտադիր չէ պասիվ հայեցողի դիրք ընդունել եւ անխառն մնալ իրադարձությունների հետագա զարգացմանը:

Ամենայն հավանականությամբ 2019 թ. հունիսին խոշորացված այդ համայնքում տեղի կունենան ե՛ւ համայնքապետի, ե՛ւ ավագանու արտահերթ ընտրություններ:

- Առայժմ չեմ որոշել՝ կառաջադրե՞մ թեկնածությունս, թե՞ ոչ, մի հարցում հաստատ համոզմունք ունեմ՝ տարիների մեր կատարածը, մեր ծրագրերը տարերքին չենք մատնի, բնակչության մեծամասնության հույսերն ու սպասելիքները չենք անտեսի, եւ եթե ոչ ինքս, ապա իմ գաղափարակիցներից մեկ ուրիշը՝ ավելի երիտասարդ, անպայման կառաջադրենք համայնքապետի թեկնածու,- ասաց Առուստամ Առուստամյանը:

Մինչեւ ընտրություններ Գորայքը կղեկավարի համայնքապետի պաշտոնակատարը:

Մինչ այդ օդից կախված է մնում գլխավոր հարցը՝ ո՞ւմ էր ձեռնտու Գորայքում իրավիճակի նման լարումը, համայնքապետի հրաժարականը, մանավանդ որ տարիների ընթացքում Առուստամ Առուստամյանը կոնկրետ գործերով ապացուցել է, որ համայնքի արժանավոր ղեկավար է, բարոյական ու մարդկային բարձր հատկանիշներով օժտված անձնավորություն:

Հ.Գ.

Համայնքի բնակիչներն ուշագրավ մի դիտարկում էլ արեցին:

Հատկապես վերջին երկու-երեք տարում Սյունիքի մարզում տեղի են ունենում մարդկային երեւակայության մեջ չտեղավորվող արտառոց երեւույթներ, իսկ հանրապետության թիվ 1 հեռուստաալիքը՝ Հ1-ը չի անդրադառնում դրանցից որեւէ մեկին: Իսկ ահա Գորայքում մի քանի հոգու ընդվզումը վերջին օրերին դարձել էր թիվ 1 լրատվամիջոցի լրահոսի գլխավոր նյութերից մեկը:

«Սյունյաց երկիր»

Հայտարարվեց «Մեղրի» ՀԷԿ-ի կառուցման ծրագիրն իրականացնող ընկերության ընտրության մրցույթ

2007թ. մարտի 19-ին Մեղրիում ՀՀ կառավարության եւ ԻԻՀ կառավարության միջեւ ստորագրվել է «Արաքս սահմանային գետի վրա հիդրոէլեկտրակայաններ կառուցելու եւ շահագործելու բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիր: Այժմ կողմերը հայտարարում են «Մեղրի» ՀԷԿ-ի կառուցման ծրագիրն իրականացնող կազմակերպության՝ ներդրող ընկերության ընտրության մեկնարկի մասին: Այս մասին տեղեկանում ենք ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարության պաշտոնական կայքից:

Նախատեսվում է, որ ներդրող ընկերությունն ինքնուրույն լուծելու է «Մեղրի» ՀԷԿ-ի կառուցման, շահագործման եւ տնօրինման հետ կապված ֆինանսական միջոցների հայթայթման եւ կազմակերպչական բոլոր հարցերը: Շինարարությունը պետք է իրականացվի 5 տարվա ընթացքում, որից հետո 15-20 տարի երաշխիքային ժամկետում «Մեղրի» ՀԷԿ-ի արտադրած էլեկտրաէներգիան պետք է վաճառքի նպատակով տեղափոխվի Իրան՝ ներդրող ընկերության կողմից կառուցվող մոտ 20կմ երկարությամբ եւ 220կՎ լարմամբ երկշղթա բարձրավոլտ օդային էլեկտրահաղորդման գծով (Ագարակ ենթակայանում նախատեսելով 3 անջատիչով սխեմա):

Հետաքրքրված ներդրողները «Մեղրի» ՀԷԿ-ի կողմից արտադրվող էլեկտրական էներգիայի գնման գնի վերաբերյալ նախնական առաջարկները, համապատասխան ֆինանսական մոդելի ուրվագծմամբ, կարող են մինչեւ սույն թվականի ապրիլի 5-ը ներկայացնել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարության էլեկտրոնային հասցեին՝ minenergy@minenergy.am:

Սույն թվականի ապրիլին նախատեսվում է Թեհրան քաղաքում կազմակերպել հանդիպում-քննարկում: Հետաքրքրված ներդրողների մասնակցությունը Թեհրանում կազմակերպվող հանդիպմանը ցանկալի է: Հանդիպման ընթացքում նախատեսվում է նախապատվություն տալ պոտենցիալ այն ներդրողին, որի կողմից առաջարկվող ֆինանսական մոդելը կընտրվի որպես լավագույնը: Այնուհետեւ պոտենցիալ ներդրողին կառաջարկվեն հետագա համագործակցության պայմանները:

«Մեղրի» ՀԷԿ-ի հիմնական բնութագրերը բերված են ստորեւ.

- Հաշվարկային հզորություն՝ 100 ՄՎտ,

- էլեկտրական էներգիայի տարեկան հաշվարկային արտադրանք՝ 750-800 մլն.կՎտժ,

- Հաշվարկային ճնշում՝ 90 մ,

- Ճնշումային թունելի տրամագիծ՝ 7,5 մ,

- Ճնշումային թունելի երկարություն՝ 18,2 կմ,

- Կապիտալ ներդրումների ծավալ՝ շուրջ 300 մլն ԱՄՆ դոլար:

Պետությունը կսուբսիդավորի գյուղացիների վարկերը. սահմանապահ գյուղերը կազատվեն տոկոսներից

Ըստ գյուղնախարարի՝ ներկայում վարկերը գյուղացիական տնտեսություններին տրվում են 3-10 մլն դրամի սահմաններում, բայց կառավարությունը թույլ կտա ստանալ մինչև 15 մլն դրամի վարկ:

Գյուղոլորտին տրամադրվող վարկերն այսուհետ կսուբսիդավորվեն ՀՀ կառավարության կողմից: Այս մասին որոշումը ՀՀ գյուղնախարարության առաջարկով ընդունվել է կառավարության հերթական նիստում:

Ըստ գյուղնախարարի՝ ներկայում վարկերը գյուղացիական տնտեսություններին տրվում են 3-10 մլն դրամի սահմաններում, բայց կառավարությունը թույլ կտա ստանալ մինչև 15 մլն դրամի վարկ՝ միաժամանակ սուբսիդավորելով վարկերի համար գյուղացիներից գանձվող վարկային տոկոսները:

«Այսինքն՝ մենք հիմա հաստատում ենք ծրագիրը, որով մինչև 15 մլն դրամ վարկ գյուղացիները կարող են վերցնել 5 տոկոս տոկոսադրույքով, գյուղացիական կոոպերատիվները՝ 3 տոկոսով, սահմանապահ գյուղերը՝ 0 տոկոսով»,- կառավարության որոշումը հստակեցրեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Նիկոլ Փաշինյան. «Մեղրիի ազատ տնտեսական գոտու հարակից տարածքում ազատ հող չկա, բոլորը սեփականացվել են»

Կառավարության նիստում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Մեղրիի ազատ տնտեսական գոտու հարակից տարածքում ազատ հող չկա, բոլորը սեփականացվել են:

Վարչապետին զեկուցեցին, որ հարուցվել է քրեական գործ, ոստիկանության գործընկերները տեղեկացրել են, որ հաշվի առնելով գործի շրջանակներում առկա փաստերը, միանշանակ է, որ տվյալ հողատարածքը ենթակա է վերադարձման պետական ենթակայության տակ:

Գործընթացը կտեւի 2-3 ամիս:

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը զեկուցեց, որ արագացրել են գործի նախաքննությունը, որպեսզի սեղմ ժամկետներում ունենան ավարտուն գործ:

Վազգեն Սարգսյան.«Թշնամու ոտքը երբեք մեր հողը չի մտնի»

«Ազանգեզուր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանի հարցազրույցը Վազգեն Սարգսյանի հետ

- Պարոն նախարար, ինչպե՞ս եք բնութագրում օպերատիվ կացությունը սահմանագծում:

- Զուտ պաշտպանական իմաստով դրությունը որոշ չափով թեթեւացել է Լաչինի վտանգի սպառման հետեւանքով: Փաստորեն մեր մի ձեռքն ազատվեց: Մյուս՝ հարավային ուղղությամբ վտանգն առկա է, եւ մենք կարող ենք հանկարծակիի գալ, եթե այսօր ինտենսիվորեն չնախապատրաստվենք հնարավոր հարձակումների դիմակայմանը: Անհրաժեշտ է բոլոր օղակներում բարձրացնել կարգապահության, կազմակերպվածության մակարդակը, որը վերջին օրերին, հայտնի իրադարձություններից հետո, բավականաչափ խարխլվել է: Անհրաժեշտ է բարձրացնել զգոնությունը, ուժեղացնել սպառազինությունը, վերջին հաշվով՝ պաշտպանվածությունը: Այս խնդիրներն իրականացնելու համար էլ գտնվում եմ Գորիսում:

- Փաստորեն չհայտարարված պատերազմ է: Պետական ո՞ր կառույցն է ղեկավարում շրջանի պաշտպանությունը, կոորդինացնում զինյալ ստորաբաժանումների գործողությունները: Այս հարցում անորոշությունն այնքան ընդգծված է, որ վերջին մեկ-երկու ամսում տարբեր օղակներում փորձ է կատարվում ստեղծելու ինքնապաշտպանության խորհուրդներ, զինյալ միավորումներ:

- Ոչ մի նորաբույս կառույց, առավել եւս ինքնապաշտպանության խորհուրդ ու կոմիտե, ում կողմից էլ որ ստեղծված լինեն, չեն կարող իրականացնել շրջանի պաշտպանությունը: Ցանկացած կատույց իր ստեղծման պահից օրենքից դուրս է:

Գորիսում եւ սահմանային մյուս շրջաններում պաշտպանությունն իրականացնում է սահմանապահ պարետատունը՝ իր հրամանատարությամբ, ներքին օղակներով՝ ուղեկալներով, պահակակետերով: Պաշտպանական խնդիրներ իրականացնելուց պարետատան պարետի ենթակայությամբ են գործում նաեւ զինվորական կոմիսարիատը, պահեստազորայինների գումարտակը, շրջանային միլիցիայի աշխատակիցները: Դրսից գործուղված ռազմական բոլոր ջոկատները նույնպես մտնում են պարետատան ենթակայության տակ: Կարծում եմ՝ այս ուժերն ի զորու են պաշտպանելու սահմանների անվտանգությունը: Իրավիճակի կտրուկ բարդացումների դեպքում գործուղության մեջ կդրվեն պաշտպանության նախարարության ցամաքային ուժերի չորս գնդերը:

Գեներալ-մայոր Մուրազ Սարգսյանը վերջին ամսին գտնվում է Զանգեզուրում՝ չորս շրջանի պաշտպանական կառույցների գործունեությունը կոորդինացնելու նպատակով: Քանի որ, հանգամանքների բերումով, իրավիճակն ավելի ռազմականացված է Գորիսում, ուստի պարոն Սարգսյանն իր գործունեությունը հիմնականում ծավալում է Գորիս շրջանում:

- Հաճելի է լսել, որ տարածաշրջանի պաշտպանությունն իրականացվում է եւ կիրականացվի պետական մակարդակով, պետական կառույցների միջոցով: Այդ դեպքում ինչպե՞ս եք մտադիր օգտագործել այն երիտասարդների ուժերը, ովքեր, գիտակցելով հայ ժողովրդին սպառնացող վտանգը, իրենց պատրաստակամությունն են հայտնում մասնակցելու երկրամասի պաշտպանությանը:

- Նման երիտասարդները, անշուշտ, կարող են իրականացնել իրենց ցանկությունը: Գորիսի սահմանապահ պարետատանը պահանջվող զինվորների հաստիքաքանակը մոտ 300 է: Մինչդեռ ծառայողների թիվը 200-ից չի անցնում:

Ինչպես տեսնում եք, պարետատան հաստիքացուցակը հեռու է լրացված լինելուց: Մինչեւ 33 տարեկան բոլոր երիտասարդները, ովքեր ցանկանում են ընդգրկվել պաշտպանության գործում, այդ հնարավորությունն ունեն: Ի դեպ, խոսքս իսկական զինվորական ծառայության, ազնիվ մղումով հայրենիքին ծառայելու մասին է եւ ոչ թե սեփական անձը ռեկլամելու, դեպքից դեպք թեժ կետերում երեւալու մասին: Ասել եւ ասում եմ՝ յուրաքանչյուր հայ մարդ, ով կարող է եւ ուզում է մասնակցել հայրենիքի պաշտպանությանը՝ չունի եւ չի ունենա կառույցի, զենքի, զինամթերքի, աշխատավարձի պրոբլեմ: Կան պետական կառույցներ, որոնք ոչ ոքի առաջ իրենց դռները չեն փակում:

Պետք է եւս մեկ անգամ հիշեցնեմ՝ պաշտպանությունը զուտ պետական խնդիր է եւ չի հանդուրժում ոչ մի խմբակային, կուսակցական, թայֆայական մոտեցում:

- Իսկ ի՞նչ կարգավիճակով են օժտված երկրապահ ջոկատները:

- Երկրապահ ջոկատները, որոնցից ծնունդ առան այսօրվա պետական ռազմական կառույցները, հանդիսանում են զինվորական կոմիսարիատում կազմավորվող պահեստայինների կորիզը: Երկրապահ ջոկատների շրջանային շաբերի պետերը ծառայության են անցնում պահեստազորային գումարտակում՝ անձնակազմի գծով գումարտակի հրամանատարի տեղակալ: Ժամանակավորապես պահեստազորայինների գումարտակի հրամանատար է նշանակված շրջանի զինվորական կոմիսարը:

Թվարկածս կառույցներից դուրս որեւէ ռազմական կառույց, որեւէ ջոկատ օրինական համարվել չի կարող եւ պատժելի են քրեորեն:

Մենք պետք է հասնենք այն վիճակին, որ պետական կառույցից դուրս, չգրանցված որեւէ զենք անգամ չմնա մարդկանց մոտ, քանզի հսկողությունից դուրս գտնվող զենքը չարիք է հասարակության համար: Եվ դա վերաբերում է բոլորին՝ առանց որեւէ բացառության:

- Քանի որ խոսք գնաց քաղաքացիների կողմից զենք կրելու մասին, ուստի ցանկալի է իմանալ, թե Հայաստանի Հանրապետությունում ո՞վ, ո՞ր մարմինը կարող է քաղաքացուն, պաշտոնատար անձին զենք կրելու իրավունք վերապահել:

- Գոյություն ունի զենք կրելու թույլտվության կարգ՝ սահմանված հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից: Կա նաեւ զենք կրելու իրավունք ունեցող պաշտոնատար անձանց ցանկ: Այդ ցանկից եւ կարգից դուրս Հայաստանի Հանրապետությունում ոչ մի մարմին, ոչ ոք չի կարող որեւէ մեկին զենք կրելու իրավունք վերապահել:

- Գորիսեցիներս պակաս մտահոգված չենք Գորիս-Կապան ավտոխճուղում անվտանգության ապահովման հարցով:

- Թույլ տվեք այդ մասին խոսել մի քանի օր հետո:

- Ի՞նչ ճակատագիր կարող է ունենալ Լաչինի միջանցքը:

- Այդ հարցը կլուծվի կլոր սեղանների շուրջ: Իրավիճակից դուրս գալու համար շատ ճկուն, բազմապլան քաղաքականություն պետք է իրականացնել, ինչով եւ զբաղված են ՀՀ եւ ԼՂՀ ղեկավարները: Կարող եմ շեշտել, որ դա հավասարազոր է, եթե ոչ ավելի դժվար, ռազմական գործողություններին: Բոլոր դեպքերում համոզված եմ, որ մենք պայքարի այս փուլից նույնպես պատվով դուրս կգանք:

- Թեեւ ռազմական հաջողություններն առկա են, բայց անհնարին է չնկատել, որ իրավիճակը մնում է ծանր շրջանի սահմանամերձ գյուղերում, նկատի ունեմ նախ եւ առաջ Կորնիձորը, Ներքին Խնձորեսկը, Շուրնուխը: Ի՞նչ կարելի է ակնկալել այդ բնակավայրերի պաշտպանության ուժեղացման ուղղությամբ:

- Մենք, ի վերջո, պետք է հաշտվենք այն մտքի հետ, որ պատերազմող ժողովուրդ ենք: Այդ գյուղերի պաշտպանությունն ուժեղացվել է եւ կուժեղացվի,

էջ 7

Արցախյան պատերազմի կապանցի ազատամարտիկները միավորվում են նոր հասարակական կազմակերպությունում

Մեկ ամիս է, ինչ Կապանում գործում է Արցախյան պատերազմի վետերանների միավորման «Յոթնաբերդ» հայրենասիրական հասարակական կազմակերպությունը:

Մարտի 5-ին Կապանի Արամ Մանուկյան-1/60 հասցեում բացվեց կազմակերպության գրասենյակը, որին մասնակցում էին Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը, Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյանը, Արցախյան պատերազմի մասնակիցներ:

Օրը պատահական չէր ընտրված, մարտի 5-ին լրանում էր ռազմական եւ քաղաքական գործիչ, Հայաստանի եւ Արցախի հանրապետությունների ազգային հերոս Վազգեն Սարգսյանի ծննդյան 60-ամյակը:

Փոխգնդապետ, Կապանի նախկին զինկոմ Լեոնիդ Գրիգորյանը հակիրճ ներկայացրեց կազմակերպության նպատակներն ու խնդիրները. կարեւորեց մասնավորապես մերօրյա պատերազմի մասնակիցների համախմբումը, նրանց հիմնախնդիրներին ուշադրություն դարձնելը, մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությունը, Արցախյան պատերազմի վետերանների ջանքերի միավորումը՝ հանուն երկրի առջեւ ծառացած խնդիրների լուծման:

Գրասենյակի բացման պատիվը տրվեց Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյանին եւ կազմակերպության նախագահ, պահեստազորի գնդապետ Արթուր Մարտիրոսյանին:

Այնուհետեւ գրասենյակում աղանդերի սեղանի շուրջ հնչեցին բարեմաղթանքի եւ շնորհավորանքի խոսքեր: Նախեւառաջ արժանին մատուցվեց հայոց բանակաշինության ոլորտում անուրանալի ներդրում ունեցած Վազգեն Սարգսյանին, եւ բաժակ բարձրացվեց նրա հոբելյանի առթիվ՝ ծնունդդ շնորհավոր, սպարապետ: Հընթացս հիշեցին սպարապետի սիրած ասացվածքը՝ խավարն անիծելու փոխարեն յուրաքանչյուրդ մի-մի մոմ վառեք:

Այնուհետեւ կազմակերպության անդամի վկայական հանձնվեց կազմակերպության խորհրդի 13 անդամի: Առանձնապես ջերմ էին շնորհավորանքներն ուղղված Արցախյան պատերազմի մասնակից կանանց, ովքեր մասնակցում էին միջոցառմանը:

Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը եւ Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյանը ողջերթի իրենց խոսքում ողջունեցին հասարակական նոր կազմակերպության հիմնադրումը:

Միջոցառման ավարտից հետո հանդիսության մասնակիցները այցելեցին Բաղաբուրջի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու Վազգեն Սարգսյանի հիշատակին:

Սպարապետի հուշարձանին ծաղիկներ դրվեցին մարզային եւ քաղաքային իշխանությունների, Արցախյան պատերազմի մասնակիցների կողմից:

Ծաղիկներ խոնարհվեցին նաեւ մերօրյա պատերազմի նահատակ զինվորների շիրիմներին:

Վահրամ Օրբելյան

«Սյունյաց երկրի» երախտագիտության գեղեցիկ փուրքն առ Մորուս Հասրաթյան հայագետը

«Սյունյաց երկիր» պարբերականի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանը հիմնել է հրաշալի ավանդույթ՝ թերթի որոշ համարներ ամբողջությամբ նվիրում է XX դարի երկրորդ կեսի նշանավոր այն հայերին, ովքեր ծագումով սյունեցի են:

2019 թվականի փետրվար ամսվա ողջ համարը՝ ստվար հատորի տեսքով, նվիրված է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, հնագետ, սայաքնովագետ, պատմաբան, միջնադարագետ եւ փայլուն մանկավարժ Մորուս Հասրաթյանին:

Հայ ժողովրդի մեծ բարեկամ, եզակի հայագետ Նիկողայոս Մառը «Հայկական մշակույթը, նրա արմատները եւ նախապատմական կապերն ըստ լեզվագիտության» հետազոտության մեջ, որը որպես զեկուցում կարդացվել է Փարիզում 1925-ին, գրում է. **«Հայերն առաջինն են եղել, որ միջազգայնության շաւերը եւ տիեզերական պատմության ըմբռնումը հասկացել են դեռ միջին դարերում» (էջ 8-9):**

«Սյունյաց երկրի» 2019-ի այդ հատորը լիակատար ձեւով ներկայացնում է, թե ինչպես Մորուս Հասրաթյանն իր գիտական գործունեությամբ շարունակողն է ուսուցչի՝ Մառի բնորոշած հայ առաջադեմ մտքի գործիչների գործունեության:

Հատորում տեսնում ենք, թե ինչ նշանավոր ուսուցիչներ է ունեցել Մորուս Հասրաթյանը: Դրանք են՝ ակադեմիկոսներ Հ.Օրբելի, Ն.Մառ, Հ.Աճառյան, Մ.Աբեղյան, Լեո, Հ.Մանանդյան, Ա.Տերտերյան: Խիստ ուսուցողական է XX դարի երկրորդ կեսի հայ մեծագույն բանաստեղծներից մեկի՝ Պարույր Սեւակի «Սայաթ-Նովա» դոկտորական ընդդիմախոսության զետեղումը հատորում: Ջերմորեն առաջարկելով Պարույր Սեւակին միանգամից դոկտորական աստիճան շնորհել, եզակի սայաքնովագետ Մ. Հասրաթյանը խստորեն զգուշացնում է միջնադարին անպատասխանատու մոտեցող սայաքնովագետներին, ովքեր վարկածային բանասիրության սիրահարներ են. **«...1962-ից սկսած այնպիսի մի գրական-բանասիրական պսիխոզ ծայր առավ, մանավանդ հայատառ մամուլի էջերում, որ բանը հասավ кому не лень-ի: Բանասիրական մարգանքները բառերի հեղեղի հետ հասան մինչեւ արտառոցության» (էջ 72):**

Իմաստուն ձեւով տարբեր բաժինների բաժանված հատորում տեսնում ենք այն հնավայրերի նկարները, որոնցում հնագիտական պեղումներ է իրականացրել գիտնականը, այն նշանավոր մարդկանց՝ հայ եւ օտարերկրացի, որոնց հետ ունեցել է անձնական շփումներ, այն հիմնարկները եւ ուսումնական հաստատությունները, որոնցում երկար տարիներ աշխատել է:

Ի վերջո բազմաթիվ ականավոր մտավորականների երախտագիտական հոդվածները Մորուս Հասրաթյանի մասին բնորոշում են վերջինիս գործունեությունն ու գիտական նախասիրությունները տարբեր մոտեցումներով:

«Հայագիտության համար ի վերուստ կոչվածը» խորագիրը կրող հատորը նաեւ Մորուս Հասրաթյանի գերդաստանի պատմությունն է: Տեսնում ենք նրա գեղեցիկ կնոջը՝ Հայաստանի վաստակավոր ուսուցչուհի Սիրանույշ Մարտիրոսյանին, որդիներին՝ ԽՍՀՄ սպորտային բնագավառի անվանի կազմակերպիչ Բակուր Հասրաթյանին եւ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասրաթյանին:

Ես հիանալի հիշում եմ նրա քրոջ որդուն՝ Երեւանի քաղխորհրդի նախագահ Գրիգոր Հասրաթյանին, որի աշխատանքային տարիներին Երեւանը դարձավ եվրոպական տիպի գեղեցիկ քաղաք՝ լի կանաչ այգիներով ու գեղեցիկ շատրվաններով, նաեւ շատ մաքուր:

Հատորում ներկայացված է Վատիկանի դեսպան Միքայել Մինասյանը, որի ժամանակ Հռոմում բացվեց համաքրիստոնեական սրբի պատվավոր կոչումը ստացած հանճարեղ Գրիգոր Նարեկացու արձանը:

«Սյունյաց երկիր» պարբերականի այս հատորը լի է իմաստուն պատգամներով եւ ունի մարդասիրական ու հայրենասիրական բովանդակություն: Որպես պատգամ հատորի դարձերեսին եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի...» հանճարեղ քերթվածն է, իսկ ներքեւում հայագետի ծննդավայր Ախլաթյան գյուղի կանաչ համայնապատկերը:

Չգիտեմ, ով է այս գունագեղ, ճաշակավոր հատորի ծախսերը հոգացել. նրան հղում եմ հատուկ շնորհակալություն:

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ

Գարնանային փուլը սկսվեց պարտությամբ

Մարտի 2-ին եւ 3-ին մեկնարկեց ֆուտբոլի Հայաստանի առաջնության բարձրագույն խմբի գարնանային փուլը: Կապանի «Գանձասար-Կապանը» առաջնության այս փուլն սկսում է յոթերորդ հորիզոնականում՝ 17 հանդիպումից հետո վաստակելով 22 միավոր (վեց հաղթանակ, չորս ոչ ոքի, յոթ պարտություն)՝ գնդակների 19:16 հարաբերությամբ:

Մինչեւ խաղաշրջանը սկսվելը թիմը երկու ուսումնամարզական հավաք է անցկացրել սկզբում՝ Կապանում, ապա թուրքական Անթալիայում: Այդտեղ թիմն անցկացրել է ընկերական չորս հանդիպում՝ հաղթելով Ուկրաինայի ֆուտբոլի պրեմիեր լիգայում հանդես եկող «Դեսնա» ակումբին, իսկ երեք խաղ ավարտելով ոչ ոքի: Ամեն դեպքում այս հանդիպումներում կարեւորն արդյունքը չէ, այլ խաղային տարբեր օղակների փոխհամագործակցության ստուգումն է եւ ֆուտբոլիստների անհատական ունակությունների բացահայտումը: Թիմն ունի համալրումներ, նաեւ՝ կորուստներ: Մասնավորապես, «Գանձասար-Կապանը» համալրվել է արտասահմանցի երեք ֆուտբոլիստով՝ Ալեքս Մարտին Մագայանես Բրոգի (Պերու), Ժորժե Միգել Ֆեյոշա Չուլա (Պորտուգալիա), Կլիվ Զունիոր Ռուպիյա (Զիմբաբվե): Թիմ է վերադարձել Գեղամ Հարությունյանը, ով միշտ աչքի է ընկել ռմբարկուի հատկանիշներով:

Առաջնության գարնանային փուլից առաջ հաճախ էր քննադատության ենթարկվում հայկական թիմերի կողմից արտասահմանցի ֆուտբոլիստների ձեռք բերելու գործելակերպը, բայց այն մնաց խոսակցությունների մակարդակում: «Գանձասար-Կապանում» այժմ հանդես են գալիս հինգ լեգեոներ եւ 16 տեղացի (ոչ կապանցի) ֆուտբոլիստ:

Ինչեւէ, առաջնության 21-րդ տուրում Կապանի անվամբ հանդես եկող թիմն ազատ էր խաղից, քանի որ առաջնության մասնակիցների թիվը կենտ էր (9), իսկ 22-րդ տուրում մարտի 6-ին Ավանի ֆուտբոլի ակադեմիայի խաղադաշտում «հյուրընկալեց» առաջնության առաջատար Երեւանի «Ալաշկերտին»: Հյուրընկալելը չակերտների մեջ է առնված, քանզի ինչպես երեւում է, «Գանձասար-Կապանը» շարունակում է տնային հանդիպումներն անցկացնել մայրաքաղաքում՝ կապանցի հանդիսականին զրկելով խաղադաշտում ֆուտբոլ դիտելու հաճույքից, թեպետ 2018 թ. հուլիսի 5-ին հանրապետության վարչապետի տված խոստմանը, թե՝ **ֆուտբոլը շատ արագ կվերադառնա Կապան**:

Զմեռային արձակուրդից հետո առաջին հանդիպումն անցկացնող «Գանձասար-Կապանը» 2:4 հաշվով զիջեց «Ալաշկերտին»: Անհաջող ավարտ ունեցավ նաեւ հաջորդ հանդիպումը, երբ կապանյան թիմը 0:2 հաշվով զիջեց «Արարատ-Արմենիային»:

Վահրամ Օրբելյան

Մեղրու ազատ տնտեսական գոտին ինչո՞վ է զբաղված այս պահին

Ի սկզբանե նախատեսված էր, որ Մեղրու ազատ տնտեսական գոտում պետք է ներգրավվեր 150-ից 170 մլն դոլարի ներդրումներ, նախատեսված էին արտասահմանից ներդրումներ, կային շահառու կազմակերպություններ, որոնք պետք է գործունեություն ծավալեին այդտեղ, նախատեսված էր 1500 աշխատատեղի ստեղծում. այս մասին Ազգային ժողովում կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ հիշեցրեց ԱԺ ԲՀԿ-ական պատգամավոր Սերգեյ Բագրատյանը:

Բագրատյանը հետաքրքրվեց՝ այս պահին Մեղրու ազատ տնտեսական գոտին ինչո՞վ է զբաղված, ի՞նչ գործունեություն է ծավալում, ի՞նչ արդյունք կա:

Տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար Տիգրան Խաչատրյանն էլ ասաց, որ Մեղրու ազատ տնտեսական գոտու վերաբերյալ որոշումը կայացվել է 2017 թվականի աշնանը եւ հատկացված տարածքը եղել է 1.8 հեկտարի չափ: «Շենքը կառուցվեց այդ 1.8 հեկտարի վրա, եւ դա առաջին փուլն էր ընդամենը: Նախատեսվում էր, որ պետք է տեղի ունենա հետագա ընդլայնումներ, հողամասի տրամադրում, որ հնարավոր լինի շահագործողներին գործելու իրավունք հատկացնել»,- նշեց նախարարը:

Խաչատրյանի խոսքով՝ այդ հողամասերը պատկանում են մասնավոր անձանց: «Նախարարությունում փորձել ենք քննարկել, թե ինչ եղանակով կարող ենք այդ տարածքը ներգրավել ազատ տնտեսական գոտու կազմակերպման նպատակով, ցավոք, որեւէ առարկայական համաձայնության հասնել հնարավոր չի եղել, որովհետեւ այդ անձանց իրավունքն էր համաձայնել, կամ՝ ոչ»,- ասաց նա:

Նախարարի խոսքով՝ անհրաժեշտություն է առաջացել հանրային գերակա շահ ճանաչելու եղանակով հնարավորություն տալ աշխատանքների հետագա կազմակերպման համար: «Ընթացակարգը ժամանակ է պահանջում, ստիպված ենք գնալ այդ ճանապարհով եւ առաջիկայում մենք ունենալու ենք կոնկրետ այդ ուղղությամբ արվող քայլեր, որոնց ընթացքի մասին կզեկուցենք»,- ասաց Խաչատրյանը:

Բագրատյանն էլ առաջարկեց ազատ տնտեսական գոտի ստեղծել նաեւ Գյումրիում, ինչը կնպաստի հանրապետության երկրորդ քաղաքի զարգացմանը:

«Սովորաբար ազատ տնտեսական գոտիները կազմակերպվում են մասնավոր նախաձեռնության շուրջ քննարկումների արդյունքում:

Գյումրու ուղղությամբ քննարկում է եղել մեկ կազմակերպության կողմից: Օդանավակայանից ոչ շատ հեռու գտնվող տարածքում նախատեսում էր ծավալել լոգիստիկ կենտրոնի ստեղծման ուղղությամբ ներդրում, եղել է գաղափարի շուրջ քննարկում, բայց դրանից առաջ նախաձեռնությունը չի գրանցել»,- արձագանքեց նախարարը:

Եփրատի եւ Արաքսի հովիտների դերը հայոց ճակատագրում Հովհաննես Թումանյանի գնահատմամբ...

Արմեն Կարապետյան
Պատմական գիտությունների թեկնածու

Ամենայն հայոց բանաստեղծ, մեծ մտածող, հրապարակախոս Հովհաննես Թումանյանն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ գրած հոդվածներում խորապես հետազոտել եւ խորունկ բնութագրումներ է տվել հայոց հինավուրց ոստանների՝ Եփրատի եւ Արաքսի հովիտների ունեցած դերակատարությանը հայոց հավաքական ճակատագրում:

1915թ. գրած «Մեր սրբազան հովիտները» հոդվածում նշում է, որ թեեւ դեռ շարունակվում է պատերազմը, բայց Ալաշկերտի հայ ժողովուրդը, որ հեռացել էր ռուսաց զորքի նահանջի ժամանակ, նորից ռուսաց զորքի հետ վերադառնում է իր տեղը՝ Եփրատի հովիտը: Բանաստեղծը նշում է, որ այդպես եղել է ռուս-թուրքական եւ ռուս-պարսկական բոլոր պատերազմների ժամանակ, հայ ժողովուրդը միշտ ետ ու առաջ է խաղացել ռուս զորքի հետ միասին: Ըստ Թումանյանի՝ **«էսպեսով է կարողացել եւ էսօր էլ էսպեսով է կարողանում մեր ջախջախված, ցաք ու ցրիվ եղած ժողովուրդը հանգիստ նստելու տեղ գտնի իր հայրենիքում: Էսպեսով էր, որ Արարատյան դաշտում, Արաքսի հովտում, որ ռուսներից առաջ գրեթե ամբողջովին պարսկաբնակ էր, առաջ եկավ, ստեղծվեց եւ էսօր նստած է մի հոծ հայ զանգված: Նույնը պետք է լինի եւ Եփրատի կամ Ալաշկերտի հովտում: Էդ երկու հովիտները, Արաքսի եւ Եփրատի հովիտները, մեր սրբազան հովիտներն են»:** (Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, հատոր չորրորդ, Ե., 1969թ., էջ 226):

Եփրատ եւ Արաքս գետերին նա բնորոշում է հետեւյալ կերպ. **«Մեկը մեր Մայր գետն է, մյուսը մեր Սրբազան գետը: Մեկի հովտում մեր անցյալ քաղաքական կյանքն է զարգացել ու անցել, մյուսի հովտում մեր հին ու նոր կրոններն են ծաղկել, մեր ազգային սրբությունները, մեր ազգային դպրություն-գրականությունը»:** (Նույն տեղում, էջ 226-227):

Ընդ որում՝ բանաստեղծը խորապես համոզված այն կարծիքն է հայտնում, որ էջմիածնից թերեւս ավելի հեշտ կլինի դուրս անել հայ ժողովրդին, քան թե Արաքսի ու Եփրատի հովիտներից:

Թումանյանը պատմական համոզիչ տրամաբանությամբ ընթերցողի առջեւ բացատրում եւ բացահայտում է պատմականորեն ստեղծված այն իրավիճակը, որում հաճախ է հայտնվել հայությունը տարբեր դարաշրջաններում:

Նա իրավացի էր, քանզի նման իրավիճակում, ինչպիսին առաջացել էր առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, հայ ժողովուրդը հայտնվել էր նաեւ 19-րդ դարասկզբի ռուս-թուրքական եւ ռուս-պարսկական, ինչպես նաեւ Ղրիմի եւ 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմների ընթացքում: Վերոնշյալ պատերազմների ժամանակ պատմական իրադրությունը հաճախ գրեթե նույն սցենարներով կրկնվել է: Մանավանդ ռուս-թուրքական պատերազմների ժամանակ իրադարձությունները զարգացել են հենց այս կերպ, ինչպես նշում է բանաստեղծը. **«Ահա էսօր էլ մեր աչքի առջեւ տեսնում ենք, թե ինչպես մերթ ռուս զորքի հետ հայն է առաջ շարժվում ու լցվում Արեւելյան Եփրատի կամ Արածանու հովիտը, Ալաշկերտի շրջանը, մերթ թուրքն ու քուրդն են լցվում թուրք զորքի հետ միասին»:** (Նույն տեղում, էջ 227):

Այո, դա միշտ կրկնվել է եւ հայ ժողովուրդը, նրա պատմական հայրենիքը կռվախնձոր է դարձել միմյանց դեմ պատերազմող արյունածարավ կայսրությունների միջեւ:

Արդյունքում միշտ ու մշտապես կոխկրտվել, բզկտվել, ավերակվել է հայոց հայրենիքն ու նրա բնիկ ժողովուրդը: Պատմության, անցյալի ու ներկայի ռեալ իրողությունների սթափ հաշվառումով մեծ մտածողը 1915 թվականին՝ հայոց ամենամռայլ ու ողբերգական պահին ընդգծում, արձանագրում է հետեւյալը. **«Եվ հենց էս րոպեին, երբ գրում եմ էս տողերը, թուրք բանակն ու քրդական ալայները, որ մի քանի օր առաջ գազանաբար հոշոտեցին Զեթկանի, Մոլլա Սուլեյմանի, Խաստուրի եւ այլ գյուղերի իրենց ձեռքն անցած հայ ժողովուրդին, ռուս զորքի առջեւ նորից ետ քաշված՝ երախներն արյունոտ, Ղլիջ-Գյադուկի բարձրությունները բռնած, նորից հառել են իրենց արյունակալած աչքերը ներքեւ, Եփրատի հովտի վրա»**: (Նույն տեղում):

Իսկ դա այն հովիտն է, ուր հեթանոս հայը վարդավառի ու ծաղկազարդի ժամանակ պաշտել է իր Անահիտն ու Աստղիկը, իր Արամազդն ու Վահագնը, դա այն հովիտն է, ուր հայ ժողովուրդն իր Մեծ Տրդատի հետ միասին մկրտվել է Արածանու սուրբ ջրերում, քրիստոնեություն է ընդունել ու իր մկրտության տեղը «տաճար է կանգնել, ճակատին դրոշմել՝ **«Ով կընկնի էս վեմի վրա՝ կջախջախվի, իսկ ում վրա սա կընկնի՝ կհոսի ջրի պես: Էն հովիտի վրա, ուր փռված է Ձիրավի դաշտը, որի վրա էնքան ու էնքան հաղթանակներով խոյացել են Արշակունիները, Բագրատունիները, Մամիկոնյաններն ու Արծրունիները: Էն հովտի վրա, որին շրջապատել են Ծաղկանց լեռները, Բարթողի շղթան, Նպատն ու Սուկավետը, որի վրա, իր ալեւոր գլուխը միչեւ երկինք բարձրացած՝ հսկում է Ազատ Մասիսը»**: (Նույն տեղում):

Հիրավի, պատմության եւ պատմականի ճշմարտացի ընկալման ինչպիսի զգացողություն է դրսեւորում մեծ բանաստեղծը, որը կարող է զարմացնել անգամ ակադեմիկոս գիտնականներին: Այո, հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական, հոգեւոր-կրոնական, մշակույթային ողջ կյանքն անցել է Եփրատ եւ Արաքս գետերի հովիտներում: Նրա քաղաքների, մայրաքաղաքների մշակութային կոթողների, վանքերի եւ եկեղեցիների զգալի կամ մեծագույն մասը ստեղծվել, կառուցվել է վերոնշյալ հովիտների տարածքներում, կարեւորագույն պատերազմական իրադարձությունները, ճակատամարտերը տեղի են ունեցել այստեղ:

Թումանյանը մեր պատմության ամենադժնդակ պահին հավատացած է, որ անդիմադրելիորեն դեպի այդ հովիտներն են ձգտում մեր սրտերը, մեր մտքերը, մեր հոգիները: Քանզի **«էնտեղ են մեզ համար էն ամենը, ինչ որ մի ժողովրդի դարձնում են մեծ ու գեղեցիկ, էն ամենը, ինչ որ մի ժողովրդի կյանք ու ոգի են տալիս: Դեպի մայր Եփրատի ու Արաքսի հովիտները (ընդգծումը մերն է –Ա. Կ.)»** (էջ 228):

Նույն 1915 թ. գրված մի այլ հոդվածում («Հանգիստ ու լիքը հավատով») բանաստեղծը նշում է, որ սրանից շատ ավելի մեծ աղետներ ենք տեսել, շատ ավելի մեծ տարածությունների վրա, շատ ավելի երկար ժամանակներով, շատ ավելի ծանր կորուստներով, **«Փախչողն ու գաղթողն էլ չի իմացել, թե ու՞ր ապաստանի, ու ոչ մի տեղից էլ ոչ մի օգնություն կամ օգնության հույս չենք ունեցել: Բայց այնուամենայնիվ անց ենք կացրել էս ամենը»** (Նույն տեղում, էջ 231):

Թումանյանը կրկին հույսով ու հավատով այն համոզմունքն է հայտնում, որ այսօր շատ ավելի բարեհաջող են պայմանները, քանի որ **«էսօր մեզ հետ է ռուսական մեծ բանակն ու բովանդակ Ռուսաստանը, նրա միջոցով էլ աշխարհի մեծագույն պետություններն ու լուսավոր ազգերը, եւ համաշխարհային թոհուբոհի մեջ՝ մեր վիճակի մասին խոսք են հանում Ռուսաստանից մինչեւ Ամերիկա, վերջապես էն հաստատ հավատն էլ ունենք, որ ինչքան էլ կատաղի լինի թշնամու վայրագությունը-վերջինն է լինելու»** (Նույն տեղում, էջ 231):

Որքան էլ 1915 ավերիչ ու սեւ թվականը հոշոտիչ եղավ հայության համար, այնուամենայնիվ, հայ ժողովրդի իմաստուն զավակները, որոնց շարքում, առաջին հերթին Հովհաննես Թումանյան իմաստնագույն այրը, ցուցաբերում է զարմանալի պայծառատեսություն, բարձր կամք եւ հավատով լցվում հայ մարդու եւ Հայաստան երկրի հետագա արարիչ ապագայի հանդեպ:

Դժնդակ 1915 թվականն անգամ չսպանեց մեծ բանաստեղծի այն հավատը, որ հայ ժողովուրդը Փյունիկի նման վերհառնելու է համաշխարհային պատերազմի մոխիրներից: Այս առումով հատկանշական է նրա հետեւյալ՝ «Դեպի մեծ կյանքը» հոդվածից մեջբերվող սույն շեշտադրումը. **«Մենք՝ հայերս էլ փոքր ազգերից մինն ենք: Տաճկական բռնակալության անկումով ու Հայկական հարցի բարեհաջող լուծումով մեր առջեւ էլ նոր հորիզոններ են բացվում: Հնարավորություն ենք ստանում ապրելու շատ ավելի գեղեցիկ ու խոր զգացմունքներով, զբաղվելու մեծ խնդիրներով, մտնելու հառաջադեմ ազգերի եղբայրության մեջ ու նրանց հետ միասին երազելու կյանքի վսեմ երազները, նրանց հետ միասին մասնակից լինելու համամարդկային մեծ խնդիրների, մշակույթի ազնիվ գործին ու նրանց հետ միասին գնալու դեպի մեծ կյանքը: Եվ մեր բախտավորությունն այն է, որ մենք միանգամայն ընդունակ ենք սրան, ու էստեղ է, որ կարող ենք ասել՝ փոքր ժողովուրդ չենք մենք»** (էջ 230):

Վազգեն Սարգսյան.«Թշնամու ոտքը երբեք մեր հողը չի մտնի»

էջ 5

խուճապի մատնվելու կարիք չկա: Թշնամու ոտքը երբեք մեր հողը չի մտնի: Գյուղերի հրետակոծումը, ինչով զբաղվում են ազերիները, հերոսություն չի պահանջում: Բայց ռմբակոծումները պետք է լռեցնել ռմբակոծությամբ՝ մինչեւ պատերազմի հաղթական ավարտ, մինչեւ հարցի քաղաքական կարգավորում: Փառք Աստծո, մենք այսօր հաղթանակած վիճակում ենք, սակայն եթե կազմակերպվածությամբ, կարգապահությամբ, խուճապի չմատնվելու կարողությամբ չամրապնդենք մեր հաղթանակը, ամեն ինչ կարող է շուռ գալ մեր դեմ:

Գորիսի հերոսական ժողովրդին ցանկանում եմ հաստատակամություն, պետական բարձր մտածողություն եւ առաջին հերթին՝ միաբանություն: Մեզանից յուրաքանչյուրն առաջին հերթին հայ է, Հայաստանի քաղաքացի, հետո նոր գորիսեցի, ամենավերջում՝ որեւէ կուսակցության անդամ: Մենք կհաղթենք, եթե առաջնորդվենք այս սկզբունքով:

Հայրենիքը չի սկսվում եւ չի ավարտվում որեւէ գյուղով, քաղաքով, եթե անգամ դա իմ սիրելի Գորիսն է: Եվ պատմության մեջ հաճախ ենք պարտվել, երբ հայրենիքի պաշտպանությունը վեր ենք ածել գավառի, մելիքության, շենի պաշտպանության: Այդ սխալները չկրկնենք:

Ռուսի նման հզոր ժողովուրդը 1812 թ. պատերազմում անգամ Մոսկվան հանձնեց, բայց հայրենիքը պաշտպանեց: Դրա շնորհիվ էլ կա Ռուսաստանը եւ կարողանում է վճռորոշ ազդեցություն ունենալ համաշխարհային քաղաքականության վրա:

- Այդուհանդերձ, յուրաքանչյուր հայի համար թանկ է ամեն մի թիզ հողը եւ տրամաբանական կարելի է համարել, երբ գյուղական համայնքը հայրենի երկրամասը պաշտպանելու համար դիմում է տարբեր քայլերի: Հենց այդ շարժառիթով էին մի խումբ խնձորեսկցիներ ապրիլի կեսերին մեկնել Երեւան՝ ՀՀ պաշտպանության նախարարություն: Սակայն նրանց, մեզ հասած տվյալներով, Դուք չեք ընդունել: Խնձորեսկցիներին ընդունել էր սահմանապահ զորքերի վարչության պետը՝ պարոն Գրիգորյանը:

- Ես չեմ հիշում այդ դեպքը, հավանաբար զբաղված եմ եղել առավել կարեւոր գործերով: Չեմ կարող չհավատալ նաեւ Ձեր ասածին, բայց դա դեռ ոչինչ չի նշանակում: Պետք է մեկընդմիշտ հիշել, որ պաշտպանության, ռազմական հարցերը չեն կարող լուծվել լայն զանգվածների հետ: Ժողովրդավարությունը լավ բան է, բայց ոչ պաշտպանության հարցերում: Ես հասկանում եմ մարդկանց ցավը, սիրում, հարգում բոլորին, ինքս էլ գյուղացի եմ, բայց խորհուրդ չէի տա, որ ինչ-ինչ հարցերի լուծման խնդրով գյուղական համայնքների ներկայացուցիչները նախարարություն գային: Նմանատիպ հարցերը կարգավորելու համար կան համապատասխան անձինք, օղակներ: Իհարկե, այդպիսի ընդունելություններով, հանդիպումներով, էժան, կեղծ, սուտ խոստումներով չափազանց հեշտ է հեղինակություն ձեռք բերել: Ես, սակայն, գործի մարդ եմ եւ իմ մասին խնդրում եմ դատել իմ արած գործի արդյունքներով:

«Զանգեզուր», N 43 (7111),
10 հունիսի 1992 թ.

Մեկ ժամ Թումանյանի հետ

Թումանյանական մթնոլորտ էր Կապանի համայնքապետարանի «Ակումբագրադարանային հիմնարկ» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային գրադարանի ընթերցասրահում: Պոետի 150-ամյա հոբելյանին նվիրված գրքային ցուցադրանք էր կազմակերպվել, ամենուր ամենայն հայոց բանաստեղծի ասույթներն էին: Մեծադիր էկրանին սահում էին բանաստեղծի կյանքին ու գործին առնչվող փաստեր, լուսանկարներ: Գրադարանի միջոցառումների կազմակերպիչ Ռուզաննա Գալստյանը ուշագրավ դրվագներ ներկայացրեց բանաստեղծի ստեղծագործական եւ առօրյա կյանքից, մասնավորապես, այն մասին, թե ինչպես նա կոչվեց Ամենայն հայոց բանաստեղծ: Թումանյանի բանաստեղծությունների տեքստերով երգեր հնչեցին, պատանի ընթերցողները ասմունքեցին հատվածներ պոետի պոեմներից եւ բանաստեղծություններից: Ելույթ ունեցան նաեւ Կապանի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի սաները՝ ռուսերենով ասմունքելով նրա բանաստեղծություններից: Մասնավորապես, հնչեց Պուշկինի «Ձմռան գիշեր» բանաստեղծությունը, որ Թումանյանը թարգմանել է հայերեն եւ իր գեղարվեստականությամբ չի զիջում բնօրինակին: Ներկայացվեցին նրա առնչությունները ռուս բանաստեղծների հետ (Բրյուսով, Բայլմոնտ, Գորոդեցկի եւ ուրիշներ):

Վերջում միջոցառման մասնակիցները՝ Նառա Մելքումյան, Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյան, Կառլեն Թադեւոսյան, «Ակումբագրադարանային հիմնարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն Արմեն Գեւորգյան եւ ուրիշներ, շնորհակալություն հայտնեցին ցերեկույթը նախաձեռնողներին՝ իրենց թումանյանական աշխարհ տանելու համար: Փետրվարի 19-ի գիրք նվիրելու օրվա խորհրդին համահունչ Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյանի կողմից գրադարանին հանձնվեցին թանկարժեք գրքեր:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

«Թումանյանը՝ երգերում»

Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների շրջանակում Սյունիքի մարզային գրադարանի մշակույթի բաժնում հյուրընկալվել էին N6 հիմնական դպրոցի 3-րդ «ա» դասարանի (ուսուցչուհի՝ Ալվարդ Սարգսյան) աշակերտները եւ N7 հիմնական դպրոցի երգչախումբը (երաժիշտ, մանկավարժ՝ Սոնյա Սարգսյան): Կարեւորվեց Հովհաննես Թումանյանի դերը որպես մանկագիր: Երեխաները հանդես եկան գրական-երաժշտական համադրույթով, ներկայացրին հատվածներ Թումանյանի հեքիաթների բեմադրություններից: Մանկական երգչախումբը կատարեց երգեր Հովհաննես Թումանյանի բանաստեղծությունների եւ պոեմների տեքստերով: Ներկաներին հատկապես ոգեւորեցին դպրոցականների՝ երգերի եւ Թումանյանի ստեղծագործությունների անմիջական կատարումները: Միջոցառումից անմասն չմնացին նաեւ ցերեկույթի մասնակիցները, ովքեր արտասանեցին Թումանյանի մեկական քառյակ:

Վահրամ Օրբելյան

Օգնենք անպաշտպան մանուկներին գլխի վրա ծածկ ունենալու համար

Սիսիանում բնակվող բազմանդամ ընտանիքի մասին պատմող նյութը ֆեյսբուքում անտարբեր չթողեց շատ-շատերին:

21-րդ դարում մարդիկ բնակվում են սանիտարական պայմաններից զուրկ, մի փոքրիկ սենյակում ինը հոգով՝ Լիլիթիկ (մեկ տարեկան), Ռուբիկ (2 տարեկան), Էդիկ (3 տարեկան), Քրիստիկ (6 տարեկան), Արտյոմ (8 տարեկան), Հայկ (9 տարեկան), Աշոտ (23 տարեկան, երեխաների քեռին), Էդիսոն (65 տարեկան՝ պապիկը), Սիմիզար (66 տարեկան՝ տատիկը):

Փոքրիկներին պահում են տատն ու պապը: Այդ ընտանիքը անհապաղ պիտի տեղափոխվի նորմալ բնակարան:

«Ընկերներիցս մեկի ֆեյսբուքյան էջում երկու նկար տեսա, որում՝ պատկերված էր այդ ընտանիքի տան անմխիթար վիճակը: Ինձ շատ հուզեց այդ տխուր, մինչեւ հոգու խորքը տակնուվրա անող տեսարանը, իմ ֆեյսբուքյան էջում գրառում թողեցի այն մասին, որ այս ընտանիքին անհապաղ օգնություն է անհրաժեշտ: Գրառումս մեծ արձագանք գտավ ոչ միայն Հայաստանի տարբեր մարզերում, այլեւ արտերկրում: Արձագանքներ եղան ԱՄՆ-ից, Ուկրաինայից, Ռուսաստանի Դաշնությունից: Օգնություններ եղան հագուստի, սննդի, վառելափայտի, առաջին անհրաժեշտության պարագաների տեսքով»,- պատմում է Շողեր Հարությունյանը Կապանից:

Առաջիններից արձագանքեցին «Իմ քայլը» խմբակցության Աժ պատգամավորներ Տիգրան Կարապետյանը եւ Կարեն Համբարձումյանը, Սիսիանի բժշկական կենտրոնի տնօրեն Անիկ Գրիգորյանը, զանգեր ստացվեցին աշխարհի տարբեր անկյուններից. առաջին հարցն այն էր լինում,թե ինչով եւ ինչպես օգնեն փոքրիկներին: Մասնավորապես, Աժ պատգամավոր Կարեն Համբարձումյանը վստահեցրեց, որ խնդիրն օրենքով սահմանված կարգով լուծում կստանա, քանի որ այդ փոքրիկների՝ նման անմարդկային պայմաններում ապրելն անընդունելի, եւ վտանգված են նրանց առողջությունն ու ապագան:

Բարեգործությունը նախաձեռնել են Շողեր Հարությունյանը(Կապան) եւ Արսեն Ավագյանը (Սիսիան) ու պատրաստակամություն են հայտնել, որ մինչեւ վերջ կպայքարեն, որ փոքրիկները, ովքեր զրկվել են մորից, ասել է թե՝ մայրական գուրգուրանքից, գլխի վրա ծածկ ունենան եւ ապրեն փոքրիշատե բարվոք պայմաններում:

Տեղեկանում ենք, որ ՎՏԲ բանկում բացվել են հաշվեհամարներ, որոնցով գոյացած գումարն ծառայելու է բացառապես բնակարան գնելու համար եւ ենթակա չէ օգտագործվելու այլ նպատակով: Հաշվեհամարները բացվելուց մեկ օր անց արդեն փոխանցվեց 655 հազար դրամ, իսկ բնակարան ձեռք բերելու համար անհրաժեշտ է 13 հազար դոլար: Հաշվեհամարներն են՝ AMD. 16031030205610, USD. 16031030205611, EUR. 16031030205612, RUR. 16031030205613:

Բարեգործության հեղինակները կոչ են անում բոլոր նախանձախնդիր մարդկանց ակտիվորեն մասնակցել իրենց նախաձեռնությանը եւ փոքրիկ ներդրումներով օժանդակեն, որ օր առաջ երեխաները դուրս գան այդ ծայրահեղ վիճակից:

Վահրամ Օրբելյան

Նվիրված Օրբելյանների իշխանական տոհմին

Կապանի համայնքապետարանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհուրդը կազմակերպել էր «Սյունիքի պատմության քարուղիներով» սիմպոզիում՝ «Օրբելյանները. 12-15 դարեր» թեմայով, որ հովանավորել էր Կապանի համայնքապետարանը, «Վորլդ Վիժն»- Հայաստան» Սյունիքի տարածքային ծրագիրը եւ «Եվրամիություն հանուն երիտասարդության՝ հմտություններ ապագայի համար» ծրագիրը: Քարուղիներ է գրված վերնագրում, ոչ թե քառուղիներ, եւ դա վրիպակ չէ, սիմպոզիումի կազմակերպիչները նկատի ունեն Սյունիքի քարե ուղիները: Օրբելյաններն առանցքային դեր են խաղացել Սյունիքի պատմության մեջ: Սյունիքի տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանն իր «Պատմություն նահանգին Սիսական» աշխատության մեջ այդ մասին հանգամանորեն պատմում է, նաեւ որպես ականատես: Մի քանի դար Սյունիքի ռազմաքաղաքական կյանքի կազմակերպման եւ ղեկավարման պատմական դերը վերապահվել էր Օրբելյանների իշխանական տոհմին, որն արդեն 13-րդ դարի առաջին քառորդում հասավ իշխող դիրքի:

Օրվա բանախոսները հիմնականում երիտասարդներ էին, եւ սիմպոզիումը հենց նպատակ ուներ նրանց միջոցով լուսաբանել Սյունիքի պատմությանն առնչվող իրողությունները՝ դրանք դարձնելով հանրամատչելի:

Զեկուցումներն ընդգրկում էին թեմաներ նվիրված Օրբելյանների ծագումնաբանությանը (ո՞վ է Ստեփանոս Օրբելյանը), Օրբելյան իշխանական տոհմի ապրած պատմական ժամանակաշրջանին եւ ներքին քաղաքականությանը, այն մասին, թե ինչու է Սմբատ Օրբելյանը կոչվել «Սմբատ արքա», հայ-վրացական հարաբերություններին, Նորավանքի դամբարանին եւ պատմությանը, որպես միջնադարյան մշակութային երեւույթ եւ այլն: Առանձին զեկուցմամբ պատմվեց Տաթեւի Օրբելյանների երեւելի ներկայացուցիչների մասին: Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն Գրիշա Սմբատյանը ներկայացրեց Օրբելյան տոհմի ծագումնաբանությունը:

Միջոցառման ավարտին «Վարք Բաբիկի» գրական կոմպոզիցիայով հանդես եկան Կապանի արվեստի մանկական դպրոցի սաները: Իսկ ամենավերջում օրվա բանախոսներին հանձնվեցին հավաստագրեր:

Վահրամ Օրբելյան

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR կոդ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1150, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 11.03.2019թ.: